



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ

07 սեպտեմբերի, 2020թ.

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

Հարգարժա՛ն պարոն Միրզոյան,

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածի 1-ին մասի, «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 65-րդ հոդվածի 1-ին մասի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացնում ենք «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը:

Նախագծին կից ներկայացվում են՝

- խմբակցության որոշումն օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու մասին.
- նախագծի ընդունման հիմնավորումը.
- տեղեկանք, որտեղ տեսանելի ձևով ներկայացվում է օրենքի համապատասխան հոդվածում առաջարկվող լրացումը:

Նախագծի հիմնական գեկուցողն է Տարոն Սիմոնյանը:

Խնդրում ենք ներկայացված նախագիծն օրենքով սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

Առդիր՝ 05 թերթ:

Հարգանքով՝  **ԱՐԱՐԱՏ ՄԱՐՈՅԱՆ**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱԾԵՌՆՈՒԹՅԱՄԲ ՀԱՆԴԵՍ ԳԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածի 1-ին մասը, «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և 65-րդ հոդվածի 1-ին մասը՝ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցությունն իր 2020 թվականի սեպտեմբերի 04-ի նիստում

Ո Ր Ո Շ Ե Ց

հանդես գալ օրենսդրական նախաձեռնությամբ և Ազգային ժողովի քննարկմանն առաջադրել «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը:

Զեյնալ 126

Սեդրակ Բաղդասարյան (125) Դավիթ Զ. Անդրեասյան (128)

Արմեն Զեյնալյան (119) Վահագն Մ. Ս. Բաղդասարյան (123)

Արթուր Կիսակ (122) Ս. Ս. Բաղդասարյան (130)

Վահագն Բաղդասարյան (127) Վ. Բաղդասարյան 131

Բ. Բաղդասարյան 118

Վ. Բաղդասարյան (120) Արմեն Զեյնալյան 124

132. Վ. Բաղդասարյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-243-Ն օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասն առաջին պարբերությունից հետո լրացնել նոր նախադասությամբ.

«Աշխատանքային ստաժը հաստատող սույն մասով սահմանված փաստաթղթերից որևէ մեկի առկայության դեպքում այլ փաստաթուղթ չի կարող պահանջվել, իսկ ներկայացված փաստաթղթում առկա տեղեկատվությունը գնահատվում է հավաստիության կանխավարկածով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ
«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

«Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (այսուհետ՝ «Օրենք») լրացում կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է վարչարարություն իրականացող մարմինների կողմից Օրենքի 32-րդ հոդվածի մեկնաբանմամբ՝ ի վնաս աշխատանքային ստաժ ունեցող քաղաքացիների:

Քաղաքացիներից մեծ քանակությամբ դիմումներ են ստացվում առ այն, որ նրանց աշխատանքային ստաժը չի հաշվարկվում պետական մարմինների կողմից, քանի որ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության մարմիններն աշխատանքային գրքույկից բացի քաղաքացիներից պահանջում են նաև աշխատանքային գործունեությունը հավաստող սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթղթեր: Նման փաստաթղթեր չներկայացնելու դեպքում էլ ուղղորդում են դատարաններ՝ հիմնվելով նույն հոդվածի 3-րդ մասի վրա, անհարկի ծանրաբեռնում դատարանները՝ շատ դեպքերում իմանալով հանդերձ, որ քաղաքացիները որևէ արդյունքի չեն հասնելու այն պարզ պատճառով, որ պահանջվող փաստաթղթերը ներկայացնելու հնարավորություն նրանք հիմնականում օբյեկտիվորեն չունեն:

Սակայն պետական մարմիններն անտեսում են այն կարևոր հանգամանքը, որ Օրենքը չի պահանջում լրացուցիչ փաստաթղթեր՝ աշխատանքային գրքույկից զատ, աշխատանքային ստաժը հաստատելու համար: Այն սահմանում է, որ այն դեպքում, երբ 1992-2013թթ. համար չներկայացվի աշխատանքային գրքույկ, ապա բավարար կլինի նաև աշխատանքային գործունեությունը հավաստող սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթղթեր ներկայացնելը:

Ավելին, քաղաքացիները երբեմն օբյեկտիվորեն հնարավորություն չունեն ներկայացնելու այդ փաստաթղթերը, որովհետև, օրինակ, այն կազմակերպությունը, որտեղ իրենք աշխատել են, լուծարվել է, օրենքի խախտմամբ չի վճարել անձի սոցիալական վճարները, մինչդեռ, անձը գրանցված բարեխիղճ աշխատող է եղել կամ արխիվային փաստաթղթերը չեն պահպանվել:

Այս բոլոր դեպքերում էլ բացակայում է անձի մեղքը, և այդ քաղաքացին չպետք է վնաս կրի ոչ իր մեղքով կատարված գործողությունների կամ անգործության համար՝ զրկվելով բարեխիղճ աշխատանքի դիմաց իրեն հասանելիք աշխատանքային ստաժի հաշվարկումից և կենսաթոշակից:

Նման երևույթների բացառման պարտավորության հասցեատերը պետությունն է, վերջինն էլ պետք է կրի նման իրավիճակների բացասական հետևանքների բեռը, այլ ոչ թե քաղաքացին:

Ավելին, եթե կասկած կա, որ քաղաքացու կողմից ներկայացված փաստաթղթում կարող են անճշտություններ լինել, ապա պետությունը պետք է առաջնորդվի հավաստիության կանխավարկածով:

Հավաստիության կանխավարկածը սահմանված է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածում՝

1. Վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:

Արգելվում է անձանցից պահանջել իրենց ներկայացրած տվյալները, տեղեկությունները հավաստող փաստաթղթեր կամ լրացուցիչ տեղեկություններ, եթե այդ պահանջը սահմանված չէ օրենքով:

Եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ, ապա ինքը պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար:

2. Անձինք պատասխանատվություն են կրում վարչական մարմիններին կեղծ տվյալներ, տեղեկություններ ներկայացնելու համար:

Այսպիսով, տարակարծություններից խուսափելու և օրենքում արտահայտված իրավունքի միատեսակ կիրառման համար առաջարկում ենք հստակեցնել Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասը:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ»

Հոդված 32.

Աշխատանքային ստաժը հաստատող փաստաթղթերը և ստաժը հաշվառելու կարգը

1. Մինչև 2013 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար աշխատանքային ստաժը հաստատող հիմնական փաստաթուղթն աշխատանքային գրքույկն է կամ Կառավարության սահմանած այլ փաստաթուղթ, 1992 թվականի հունվարից մինչև 2013 թվականի հունվարի 1-ը՝ նաև սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթուղթ, բացառությամբ Կառավարության սահմանած դեպքերի: Աշխատանքային ստաժը հաստատող սույն մասով սահմանված փաստաթղթերից որևէ մեկի առկայության դեպքում այլ փաստաթուղթ չի կարող պահանջվել, իսկ ներկայացված փաստաթղթում առկա տեղեկատվությունը գնահատվում է հավաստիության կանխավարկածով: Սոցիալական վճարներ կատարելը և աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթղթերի վավերապայմանները սահմանում է Կառավարությունը:

2. 2013 թվականի հունվարի 1-ից հետո ընկած ժամանակահատվածի աշխատանքային ստաժը հաստատվում է սույն օրենքով սահմանված տեղեկատվական շտեմարան ներառված տվյալների հիման վրա:

3. Աշխատանքային գրքույկի կամ դրանում համապատասխան գրառումների կամ ստաժը հաստատող՝ Կառավարության սահմանած այլ փաստաթղթերի բացակայության դեպքում աշխատանքային ստաժը հաստատվում է արխիվային տեղեկանքով, իսկ դրա բացակայության դեպքում՝ դատական կարգով:

Աշխատանքային ստաժը հաստատող արխիվային տեղեկությունները անհրաժեշտության դեպքում լիազոր մարմինը հարցման միջոցով ստանում է պետական արխիվից, եթե դիմումին կից ներկայացվել են հարցման համար անհրաժեշտ տվյալներ: Հարցման համար անհրաժեշտ տվյալների ցանկը և դրանք ներկայացնելու կարգը սահմանում է Կառավարությունը:

4. Մեկ օրացուցային տարվա համար չի կարող հաշվարկվել մեկ տարուց ավելի աշխատանքային ստաժ, բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի:

5. Պատերազմների, ռազմական գործողությունների, տարերային աղետների, վթարների, արհավիրքների և այլ արտակարգ իրավիճակների հետևանքով աշխատանքային ստաժը հաստատող փաստաթղթերի ձեռքբերման անհնարինության դեպքում Կառավարությունն ստեղծում է աշխատանքային ստաժ սահմանող հանձնաժողովներ, որոնց կազմում ընդգրկվում են գործադիր իշխանության, գործատուների, արհմիությունների կամ աշխատողների լիազորած ներկայացուցիչներ:

6. Աշխատանքային ստաժը հաշվարկելու կանոնները սահմանում է Կառավարությունը: